ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 369 - Ա/1 **24 դեկտեմբերի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 357 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներին պարգևատրում տալու մասին» N 357-Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) կարգադրության վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի պետական վարչական պաշտոններ, պետական հայեցողական պաշտոններ և քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պարգևատրելու մասին»

2) կարգադրության նախաբանում «Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից հետո լրացնել «6-րդ հոդվածի 6-րդ մասով,» բառերը.

3) կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի տնտեսված միջոցների հաշվին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի պետական վարչական պաշտոններ, պետական հայեցողական պաշտոններ և քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց՝ համաձայն հավելվածի:»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրմանն պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ